«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը հայ գրականության ուսուցման գործընթացում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Բոյաջյան Աստղիկ

Ուսումնական հաստատություն՝ ՀՊՄՀ հենակետայի վարժարան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն——————————————————————————————3

Գլուխ 1

Գաղափար քննադատական մտածողության մասին, քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը դպրոցում ——————————————5

Գլուխ 2

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը «Հայ գրականություն» առարկայի ուսուցման գործընթացում——————————————————11

Եզրակացություն——————————————————————————14

Գրականության ցանկ——————————————————————————16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում միտված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդին նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված՝ նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում: Նշված գործընթացները պահանջում են անձի քննադատական մտածողության առկայություն: Այս հիմնախնդիրն այժմ բավական արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն թեմա է, սակայն հարկ է նշել, որ քննադատական մտածողության հիմնախնդիրը ձևավորվել է դեռևս անտիկ փիլիսոփայության մեջ, մասնավորապես, նշանակալի դեր ունեն Ջ. Դյուիի հայացքները ռեֆլեքսիվ մտածողության վերաբերյալ: Լայնածավալ հետազոտություն է իրականացրել նաև ամերիկացի հոգեբան Դ. Հալփերնը, իսկ քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիաները հետազոտվել են Ջ. Սթիլի, Կ. Մերեդիթի, Չ. Թեմփլի, Ս. Ուոլթերի կողմից: Մ. Լիփմանը ստեղծել է քննադատական մտածողության ամբողջական հայեցակարգ՝ սահմանելով նրա բնութագրիչները, բաղադրատարրերը, փուլերը, գործառույթները, գործոնները: Քննադատական մտածողության նպատակներին, կառուցվածքին, բաղադրիչներին, զարգացման չափանիշներին են նվիրված Ս. Բրուկֆիլդի, Ս. Ի. Վեքսլերի, Լ. Ս. Վիգոտսկու, Ա. Ն. Լեոնտևի, Դ. Ռասսելի, Կ. Պոպպերի հետազոտությունները: Բարձրագույն մասնագիտական կրթության խնդիրների համատեքստում քննադատական մտածողության զարգացման տեսագործնական հարցերն ուսումնասիրել են Ե. Ի. Ֆեդոտովսկայան, Ա. Վ. Կորժուևը: Տարիքային տարբեր կենսափուլերում քննադատական մտածողության զարգացման հիմնախնդիրը հետազոտել են Ե. Ա. Մուխինան, Ֆ. Ֆ. Մինկինան: Քննադատական և ստեղծագործության մտածողության հարցերը դիտարկել են Ջ. Գիլֆորդը, Ս. Լ. Ռուբինշտեյնը:

Տպավորություն է ստեղծում, որ այս քանակությամբ գիտական հետազոտություններից հետո պետք է, որ ամբողջական խոսք ասված լինի մտածողության այս եղանակի մասին, սակայն օր-օրի փոփոխվող կրթական համակարգում տեխնոլոգիական զարգացման պայմաններում շատ կարևոր է նպաստել աշակերտների մոտ քննադատական մտածողության ձևավորմանը: Քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Այն միավորել ու իր մեջ է ամփոփել մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման, խաղային

ուսուցման տեխնոլոգիաների արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ:

Հետազոտության շրջանակներում քննադատական մտածողության տեխնոլոգիան ուսումնասիրվել է տեխնոլոգիա առարկայի ճանաչողական կարողությունների զարգացման տեսանկյունից՝ ապահովելով նպաստավոր մանկավարժական պայմաններ սովորողների բնականոն զարգացման համար: Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է նաև որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին լինել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է որպես ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ տեխնոլոգիայի ուսուցման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

Դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը դպրոցում: Ուսումնասիրել քննադատական մտածողության տեխնոլոգիայի գիտատեսական, մեթոդաբանական հիմքերը և հիմնավորել տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման գործում:

Գլուխ 1

Գաղափար քննադատական մտածողության մասին, քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը դպրոցում

Մանկավարժական գործունեության ընթացքում ուշադրության առանցքում մշտապես պետք է լինի աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց են տալիս, որ աշակերտները շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Հաճախ աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ: Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել և, իհարկե, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը բավական կարևոր են կրթական գործընթացում և կանխորոշում են ուսումնառության նպատակները,հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման, նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով, ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ և որ ամենակարևորն է զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը, ինչը հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը դարձնել արդյունավետ, թույլ տալ աշակերտներին զարգացնել և իրացնել իրենց գաղափարները: Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն: Այն կիրառում է տրամաբանությունը, ինչպես նաև հենվում է մետագիտելիքի և այնպիսի խորը ինտելեկտուալ ունակությունների վրա, ինչպիսիք են հստակությունը, ճշմարտացիությունը, արդարությունը, բովանդակությունը, լայն մտահորիզոնը:[1]

Սուխոմլինսկին երեխաների մտածական կարողությունների զարգացման մասին պատմող իր աշխատությունում սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է դիտարկում: [2]

Գիտելիքի և մտածողության միջև եղած կապին փորձել է անդրադառնալ նաև Դայանա Հալպերնը: Ըստ Դ. Հալփերնի՝ «քննադատական մտածողությունը ճանաչողական տեխնիկաների ու ռազմավարությունների կիրառումն է, որոնք մեծացնում են ցանկալի վերջնարդյունքի ստացման հավանականությունը: «Երբ մենք քննադատաբար ենք մտածում, գնահատում ենք մեր մտածական

[1] Халперн Д. Психология критического мышления.— СПб.: Питер, 2000.— 512с.— с.22.

[2] Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.

գործընթացների արդյունքները. որքանով ենք ճիշտ որոշում կայացրել կամ ինչ հաջողությամբ ենք լուծել առաջադրված խնդիրները: Քննադատական մտածողությունը ներառում է նաև հենց մտածական գործընթացների գնահատումը՝ դատողությունների ընթացքը, որոնք հանգեցրել են մեր եզրահանգումներին, կամ այն գործոնները, որոնք մենք հաշվի ենք առել որոշումների ընդունման ժամանակ» :[3]

Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: Քննադատական մտածողություն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Քննադատական մտածողությունը ճանաչողական գործընթաց է, որը վերաբերում է փորձի արդյունքում ստացված տեղեկույթի վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով:[4] Քննադատական մտածողությունը տրամաբանական, ստեղծագործական մտածողության յուրահատուկ համադրում է: «Քննադատական մտածողությունը ներառում է մտածական գործառությունները, որոնք որոշում են դատողությունների և փաստարկումների գործընթացները՝ նպատակադրումը, հիմնախնդրի բացահայտումը, վարկածի առաջադրումը, փաստարկներ բերելը, հիմնավորելը, հետևանքների կանխատեսումը, այլընտրանքային տեսակետներն ընդունելը կամ չընդունելը: Այն ներառում է իմացական հիմնական կարողությունները (գիտելիք և ըմբռնում) կիրառելու ունակությունը բարդ և ոչ միանշանակ իրավիճակների ու հիմնախնդիրների համադրման, վերլուծության և գնահատման համար:[5]

Սակայն մեզ հետաքրքրում է նաև, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները, ինչպես նաև մանկավարժական մեթոդաբանություն մեջ ինչպիսի նախադեպեր կան մանկավարժական մեթոդաբանության մեջ: Եվ իսկապես կան ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Մի շարք հետազոտությունների արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել քննադատական մտածողությունը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Դժվար է գտնել քննադատական մտածողության այնպիսի ոլորտ, որին հնարավոր չլինի տիրապետել: Ամերիկյան քոլեջների սովորողները վկայում են, որ իրենց քննադատական մտածողության հմտությունները զգալիորեն բարելավվել են մտածողության հմտություններ սովորեցնող դասընթացներից հետո : [6]

Ուսումնական գործընթացում կարելի է առանձնացնել քննադատական մտածողության զարգացման հետևյալ գործոնները՝

1. դրդապատճառային՝ հետաքրքրությունն ուսումնասիրվող նյութի նկատմամբ,

---

[3] Тягло А. В., Критическое мышление: проблема мирового образования XXI века // “Постметодика”, 2001, № 3 (35), с. 19-26.

[4] «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, N1, 2019էջ 115:

[5] Федотовская Е. И., Развитие критического мышления как задача высшей школы //Актуальные вопросы практики преподавания иностранных языков. Москва: “Академия”, 2003, 285 с.

[6] Халперн Д.Ф. Психология критического мышления. СанктПетербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с

2. կազմակերպչական-մեթոդական՝ աշխատանքի կազմակերպման ձևերը, մեթոդները, միջոցները, եղանակները, դասավանդողի մասնագիտական կոմպետենցիաները,

3. տեղեկատվական՝ տպագիր և էլեկտրոնային աղբյուրների մատչելիությունը, հասանելիությունը, դրանցով աշխատելու կարողությունների զարգացումը,

4. հաղորդակցական՝ փոխներգործուն միջավայրի ձևավորումը,

5. ռեֆլեքսիվ-գնահատողական՝ իր և այլ անձանց տեսակետների համարժեք գնահատումը, հետահայաց անդրադարձն ու վերլուծությունը:[7]

Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար կան որոշակի գործոններ, որոնք առանձնակի նպաստում են այս գործընթացի արդյունավետությունը: Թվարկենք այդ մանկավարժական գործոններից մի քանիսը.

1. ուսումնական նյութի պրոբլեմային բնույթն ու տեղեկատվական հագեցվածությունը. հնարավոր է քննարկել, ապացուցել, փաստարկել այն նյութը, որը հիմնված է կոնկրետ փաստերի, տվյալների, աղբյուրների վրա,

2. տեղեկույթի գիտականությունը, արժանահավատությունը, արդիականությունը, սոցիալական նշանակությունը, այսինքն՝ ուսումնական նյութում կենսական հիմնախնդիրների, սոցիալական նշանակություն ունեցող հարցերի արտացոլումը,

3. ուսումնական տեղեկույթի, թեմայի հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրության արթնացումը, ուսումնական դրդապատճառների ձևավորվածությունը. եթե սովորողը ցանկանում է իմանալ, ըմբռնել, իմաստավորել, խորանալ նյութի բովանդակության մեջ, ապա նա ստեղծագործական վերաբերմունք է դրսևորում, փորձում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից քաղել լրացուցիչ տեղեկույթ, համեմատել, համադրել, եզրահանգումներ անել,

4. կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում քննադատական մտածողությանը նպաստող բաղադրիչի կարևորումը,

5. կրթական գործընթացի հաղորդակցական բնույթը, ինտերակտիվ միջավայրի ձևավորումը. քննադատական մտածողությունը զարգանում է բանավեճի, քննարկումների արդյունքում: Կարևոր է, որ սովորողներն ազատ, առանց սխալվելու վախի արտահայտեն իրենց տեսակետը հանդուրժողականության և փոխըմբռնման մթնոլորտում: [8]

Քննադատական մտածողության ձևավորման գործում առանցքային դեր ունեն խմբային աշխատանքները, որոնք ապահովում են, որ խմբերի ներսում աշակերտները ունեն փոքրիկ քննարկումներ, հաճախ նաև տեսակետների բախումներ և կարողանան գտնել իրենց տրված հարցին միասնական լուծում: Այս առումով կարևոր է, որ ուսուցիչը լինի բավական ուշադիր վերահսկողի դերում, որպեսզի խմբերի ներսում չձևավորվեն բացահայտ առաջատարներ և խմբերի մյուս անդամները կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը: Ճիշտ ուղղորդման պարագայում խմբային և անհատական աշխատանքների արդյունավետ համադրումը, խմբային աշխատանքի խրախուսումը, աշխատանքը փոքր խմբերում թույլ կտա առավել վստահ լինել ու նեղ շրջանակում արտահայտել կարծիքը. խմբային տեսակետում կհամադրվեն խմբի անդամների անհատական տեսակետները, իսկ տվյալ աշակերտը ձեռք կբերի համարձակություն և կունենա

[7] «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, N1, 2019, էջ 116:
[8] Նույն տեղում, էջ 117:

վստահության զգացում: Այժմ անդրադառնանք տվորողների քննադատական մտածողության զարգացման մի քանի մեթոդների և դրանք քննենք տարբեր տարիքային խմբերի համատեքստում:
1. Աշխատանքում, ուսումնական և կենսական իրավիճակներում, գործնականում տվորողներին մղել ուսումնական նյութի շուրջ կանխատեսելու, մեկնաբանելու, ապացուցելու, իր բառերով արտահայտելու, վերլուծելու, համադրելու, համեմատելու, ժխտելու, հիմնավորելու, փաստարկելու, պատճառահետևանքային կապերը գտնելու, արժևորելու, փաստերի հիման վրա եզրահանգելու, հարցեր ձևակերպելու և այլն: Մասնավորապես, կարելի է տարրական դասարաններում նշված կետը իրականացնել մայրենիի դասագործընթացում կամ ազատ ընթարցանության ժամերին: Կարելի է ընտրել որևէ հեքիաթ և կանխագուշակումների արդյունքում հասկանալ ընթերցված նյութը ինչ շարունակություն է ունենալու: Մեթոդը կարելի է ընտրել նաև բարձր դասարանների աշակերտների համար՝ ընտրելով տվյալ տարիքային խմբին բնորոշ բնագիր: Մեթոդը տարրական դասարաններում հեշտությամբ կարելի է կիրառել նաև կերպարվեստի և տեխնոլոգիայի դասավանդման գործընթացում:

2. Տարբեր թեմաներին նվիրված էսսեները, գիտական, գիտահանրամատչելի նյութերի վերաբերյալ կարծիքները, համառոտ և ընդարձակ գրախոսությունները: Տարրական դասարաններում նշված կետը կարելի է կիրառել սկզբնական շրջանում փոքրիկ շարադարությունների, հետո նաև ռեֆերատների տեսքով: Յուրաքանչյուր դասագործընթացի վերջում կարելի է հինգ րոպե տրամադրել «Ի՞նչ եմ մտածում ես», «Ինչպե՞ս կվարվեի ես» կամ նմանատիպ այլ խորագրով քննարկման, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր դասի ավարտին խոսել իր տեսակետի կամ կարծիքի մասին:

3. Երկրում, տարածաշրջանում քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, կրթական, մարզամշակութային հարցերի վերաբերյալ քննարկումները, խոսքի՝ համապատասխան ոճին բնորոշ լեզվաքերականական միջոցներով համարժեք ձևակերպումները: Կարելի է ունենալ առանձին դաս-քննարկումներ, որտեղ անդրադարձ կկատարավեն վերոնշյալ հարցերին, ինչը կարելի է անել նաև դասագործընթացի ընթացում թեմային համապատասխանության սահմաններում:

4. Գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի, հեռուստահաղորդումների, սոցիալական հոլովակների, արդիական թեմաների վերաբերյալ համացանցային նյութերի քննարկումները, այդ նյութերի արժանահավատության ստուգումը տարբեր աղբյուրներով, գրքի, ֆիլմի կերպարի կամ կերպարների, վերջաբանի, գործողությունների զարգացումների, բախումների լուծման, վերջաբանի վերաբերյալ գրավոր և բանավոր կարծիքը, արտահայտված կարծիքի քննարկումը, մեկնաբանումը, հիմնավորումը: Քննադատական մտածողության ձևավորման կարևորագույն պայմաններից է նաև աշակերտների մշտական կապը արվեստի, գրականության և մշակույթի հետ: Կարելի է հաճախ կազմակերպել այցելություններ մշակութային կենտրոններ՝ հետաքրքրություն առաջացնել զանազան ցուցահանդեսների, մշակութային միջոցառումների շուրջ: Հետաքրքիր է նաև միասին որևէ ֆիլմ դիտելու հնարավորություն կամ կարել է ֆիլմի դիտումը հանձնարարել տնային առաջադրանք և դասարանում կազմակերպել խմբային քննարկում:

5. Տեքստի առանցքային գաղափարի առանձնացումը, վերլուծությունը, ընդհանրացումը, կենսական իրավիճակներից կամ անձնային փորձից վերցված օրինակներով մեկնաբանումը, ստեղծագործաբար զարգացումը, կանխատեսումը, անդրադարձը, ընդ որում՝ այդ աշխատանքը կարող է կրել բազմազան բնույթ՝ քննադատական կարծիք, վերլուծություն, հավանություն, հերքում, ներկայացում, գնահատում, հիմնավորում, ապացուցում, միևնույն հիմնախնդրի՝

տարբեր տեսանկյուններից մեկնաբանումը (ստույգ փաստեր, հուզական-գնահատողական մոտեցում, դրական կողմերի, զարգացման հեռանկարների նախանշում, առաջարկություններ, լուծումներ), իր և ուրիշների կարծիքների համեմատումը, հակադրումը, համադրումը, զուգահեռների անցկացումը, անհատական կարծիքների հիման վրա խմբային կարծիքի ձևավորումը, եզրահանգումը, անհատական և խմբային մակարդակում արժևորումը, արտահայտված տեսակետների ընդհանրացումը: Ուսուցման ընթացքում հաճախ պարզ է դառնում, որ աշակերտները դժվարությամբ են ընկալում կարդացված նյութը կամ դժվարանում են տարբերակել կարդացված նյութի հիմնական առանցքային գաղափարը՝ այլ կերպ ասաց տարբերակել գլխավորը երկրորդականից: Այս հանգամանքը շատ կարևոր է և պետք է աշակերտների մոտ այդ հմտությունը զարգացնել դեռ տարրական դպրոցից: Կարելի է բոլոր առարկաների դասագործընթացներում ընդգրկել քննադատական մտածողության զարգացման այս տեխնոլոգիան: Ժամանակակից աշխարհում քննադատական մտածողության կարևորությունն էլ ավելի է աճում, քանի որ տեղեկատվական հոսքերի բազմազանության ու արագության պայմաններում մարդուն անհրաժեշտ են գործիքներ ու մեթոդներ, որոնք նրան հնարավորություն կտան ֆիլտրել, դասակարգել և գիտելիքի վերածել այն տեղեկատվությունը, որն իրեն անհրաժեշտ է:

6. Միտումնավոր սխալներով, փաստերի խեղաթյուրմամբ շարադրանքի հանձնարարում, որպեսզի սովորողներն ինքնուրույն գտնեն սխալները, շտկեն, հիմնավորեն: Սա ևս բավական հետաքրքիր եղանակ է, որը թույլ է տալիս աշակերտներին սխալը գտնելով կատարել քննադատական վերլուծություն:

7. Բանավեճերը տեղեկույթի քննադատական վերլուծության, փաստարկումների և ապացույցների հիման վրա ձևավորում են տեսակետն արտահայտելու կարողություն, միևնույն թեմայի վերաբերյալ պատմողական, նկարագրական, դատողական շարադրանքները, ուսումնահետազոտական նախագծերը, խմբային քննարկումները, քեյսերը, դերախաղերն ու գործնական խաղերը, գիտագործնական կոնֆերանսները, առցանց ֆորումները: Եվ ի վերջո անդրադառնանք քննադատական մտածողություն ձևավորող կարևորագույն տեխնոլոգիաներից մեկին՝ բանավեճերին: Բանավեճերը օգնում են քննադատաբար մոտենալ բոլոր հարցերին: Բանավիճելու կուլտուրա կարելի է ձևավորել դեռ տարրական դպրոցից՝ սկսելով փոքր քննարկումներից, որտեղ կլինեն հակադիր երկու կարծիքներ, հետագայում արդեն աշակերտների հասցնել իրական բանավեճի մասնակցելու մակարդակին և որ ամենակարևորն է սովորեցնել լսել և հարգել դիմացինի կարծիքը:

Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յու-բաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխա-դարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դա-սին ունենալ իր՝ թեկուզ փոքրիկ ներդրումը:Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո (կշռադատում): Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ /հապավումով/ համակարգ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու

կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Աշակերտներին կարելի է հանձնարարելի նաև հետևյալ թեմաներով ուսումնահետազոտական նախագծեր՝

1. համամոլորակային և տարածաշրջանային տնտեսական, էկոլոգիական, սոցիալ-մշակութային հիմնախնդիրների առանձնացում, դրանց լուծման վերաբերյալ կազմակերպությունների գործունեության, փաստաթղթերի վերլուծություն,

2. կրթական զարգացումներն ապագայում. ՏՀՏ-ների կիրառումը կրթության ոլորտում. անձի սոցիալականացման և միջանձնային փոխհարաբերությունների ձևավորման խնդիրը,

3. գլոբալացման գործընթացները տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական, մշակութային ոլորտներում,

4. էթնիկ և գլոբալ ինքնություն. ազգային-մշակութային անհատականության պահպանման հիմնախնդիրը. որոնումներ, լուծումներ, ապագայի տեսլականը,

5. ժամանակակից տեղեկատվական աշխարհում սեփական հայացքների, համոզմունքների, կողմնորոշումների, դիրքորոշման ձևավորման հիմնախնդիրը,

6. սոցիալական ցանցերի դերը միջանձնային, միջմշակութային հաղորդակցման գործում:[9]

Այսպիսով, քննադատական մտածողությունը առանձին հմտություն չէ, այլ բազմաթիվ հմտությունների և կարողությունների համալիր, որոնք աստիճանաբար ձևավորվում են երեխայի զարգացման և ուսուցման ընթացքում: Այն ավելի արագ է ձևավորվում, եթե դասարանում երեխաները պասիվ ունկնդիրներ չեն, այլ անընդհատ ակտիվորեն տեղեկատվություն են փնտրում՝ իրենց սովորածը փոխկապակցելով սեփական գործնական փորձի հետ):

[9] «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, N1, 2019., էջ 116:

ԳԼՈՒԽ 2

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը «Հայ գրականություն» առարկայի ուսուցման գործընթացում

Հայ գրականություն առարկան դպրոցական ծրագիր այն առարկաներից է, որը հնարավորություն է տալիս ուսուցչին զարգացնել աշակերտի մոտ բազմաթիվ կարողություններ: Այս առումով գրական մեկ ստեղծագործության ուսումնասիրումը կարող է նախադուռ հանդիսանալ իմացական և մտածական կարողությունների ձևավորման և զարգացման համար: Քննադատական մտածողությունը այն կարևորագույն մտածողության ձևն է, առանց որի անհնար կլինի պատկերացնել գրական երկի ուսումնասիրումն ու քննարկումը: Առաջին հերթին աշակերտը պետք է կարողանա քննադատաբար մոտենալ կարդացված նյութին, արտահայտի կարծիք կերպարների մասին, ինչպես նաև ունենա գնահատողական վերաբերմունք:

Ասվածը կարելի է սկսել կիրառել դեռ տարրական դասարաններից, սակայն հաճախ այնպես է ստացվում, որ տարրական դասարաններում աշակերտները գրական երկին անդրադառնում են միայն պարզեն պատմելու տեսանկյունից և մինչև միջին կամ ավագ դասարաններ աշակերտները այդպես էլ չեն սովորում քննադատաբար վերլուծել գրական երկը: Նշված իրողությունը բավական ցավալի է, քանի որ բարձր դասարաններում հաճախ աշակերտները բախվում են մի շարք խնդիրների հետ, մասնավորապես, փոխվում են գնահատման պահանջները և աշակերտը հաճախ չի հասկանում, թե որն է դրա պատճառը և ինչ պահանջներ կան դրված իր առջև: Եվ այս պարագայում առավել դժվար է այդ հմտությունը ձևավորել և զարգացնել ավագ դպրոցում: Այդ պատճառով քննադատական մտածողության ձևավորումը և զարգացումը պետք է սկսել դեռ տարրական դասարաններում, մասնավորապես, կարելի է ցակացած բնագրի ընթերցանությունից հետո կարելի է հարցնել աշակերտների գնահատողական կարծիքը այս կամ այն կերպարի վերաբերյալ: Սկզբում կարող է իր կարծիքն արտահայտել ուսուցիչը և ուղղորդման միջոցով գնալ այս կամ այն մտածողության ձևին: Այս եղանակը կոչվում է ուղղորդող մտածողություն, որի արդյունքում աշակերտների մոտ զարգանում է քննադատական վերաբերմունք այս կամ այն նյութի կամ կերպարի շուրջ: Նախնական փուլում նրանց «մտածել սովորեցնելուց» հետո կարելի է փոխել առաջադրանքների ձևերը՝ բնագրի նկարագարդում, խաչվող հարցադրումներ, դերախաղեր, որոնք ավելի հետաքրքիր կդարձնեն դասագործընթացը և ամեն անգամ աշակերտերը անհամերությամբ կսպասեն հերթական բնագրի ընթերցանությանն ու քննարկմանը: Այս կարողությունների իրավահաջորդումը միջին դպրոց պետք է ընթանա բավական սահուն կերպով և աշակերտը նույնիսկ կարող է և չզգալ, որ իրեն տրված առաջադրանքները ավելի են բարդանում՝ չկորցնելով իրենց հետաքրքրությունը:

Հանրակրթական չափորոշչում որպես առաջնային նպատակ նշվում է գրական երկի խորքային ընկալումը, որը առավել մանրամաս սկսում ենք ուսումնասիրել յոթերորդ դասարանից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելքը, հերոսների արաքների դրդապատճառները, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները: Գրական հերոսների արաքների, բնավորության վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու, ճանաչելու

ինքն իրեն և այլ մարդկանց, այս ամենի շնորհիվ սովորողը կկարողանա կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ: Տարբեր ոճերի տեքստերի մանրազնին ուսումնասիրումը կհանգեցնի գլխավոր նպատակադրման իրականացմանը, այն է՝ բանավոր և գրավոր խոսքի առկայություն, մշտական զարգացում և կատարելագործում:

2. Գրականության ուսումնառությունը սովորողի անձնային նկարագրի, կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի ձևավորման և զարգացմանն է ուղղված: Գրական և ոչ գրական, արձակ և չափածո տեքստերի ընթերցումը, դրանց համակողմանի վերլուծությունը քննադատական և պատկերավոր մտածողության զարգացման նպատակ ունեն: Գրական-գեղարվեստական տեքստերի լեզվաոճական վերլուծությունը, դրանց կազմում հանդես եկող առանձին բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական քննությունները, օտար լեզուներից թարգմանությունները զարգացնում են աշակերտի լեզվամտածողությունը, ձևավորում են որոշակի վերաբերմունք մայրենի և օտար լեզուների հանդեպ, սովորեցնում են հարգել թե՛ սեփական, թե՛ օտար մշակույթները, արժևորել դրանք որպես համամարդկային մնայուն արժեքներ:[10]

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ ձևակերպված երկու նպատակներներում 7-12-րդ դասարանների համար ակնհայտ է դառնում, որ քննադատական մտածողության զարգացումը գրականության պարագայում առաջնային է, ինչը երևում է նաև ակնկալվող վերջնարդյունքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների, պահանջների, սահմանված կարողունակությունների հիման վրա մշակված վերջնարդյունքներով սահմանվել են հիմնական և ենթահասկացություններ, որոնց համապատասխան, ինչպես նաև տարիքային ամեն խմբի համար սահմանված են 4-5 կետով չափորոշչային հստակ պահանջներ կամ չափանիշներ: Ամեն հասկացությանը համապատասխան սահմանված չափանիշները սովորողի կարողունակությունների ձեռքբերման գնահատման հիմքն է: Այսինքն՝ ուսուցիչը միավորային գնահատման սանդղակները կազմելու է՝ առաջնորդվելով ամեն դասարանի համար սահմանված վերջնարդյունքներով: Հարկ է նկատել, որ արդի դարաշրջանում երկչափ կրթությունից՝ գիտելիք - կարողություն կամ հմտություն, անցում է կատարվել եռաչափ կրթության՝ հասկացություն – գիտելիք – կարողություն/հմտություն: Այդ է պատճառը, որ գրականության վերջնարդյունքները սահմանվել են որոշակի հասկացությունների և ենթահասկացությունների տիրույթներում: 7-12-րդ դասարանների գրականության ուսումնասիրության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

Ընթերցանություն՝ բովանդակություն և ձև

Ստեղծարարություն՝ տեքստի հետազոտում և տեքստի ստեղծում

Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում:

Վերջնարդյունքները ներկայացված են աղյուսակով, տարիքային բոլոր խմբերի, այսինքն՝ բոլոր դասարանների համար սահմանված են վերջնարդյունքները կամ չափանիշները, որոնք 4-5-ն են,

[10] https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf

սահմանված են հստակ և չափելի: Այնպես որ ուսուցչի համար տեսանելի և մատչելի կլինի օգտվել դրանցից և կազմել գնահատման սանդղակներ՝ սովորողների՝ վերջնարդյունքներին համապատասխան ձեռքբերումները գնահատելու համար: Հիմնական հասկացություններից ինքնությունը՝ վերաբերմունք և արժեորում ենթահասկացություններով, միավորային գնահատում չի ենթադրում:[11]

Յոթերորդ դասարանից սկսած աշակերտները սկսում են ուսումնասիրել որպես առանձին առարկա հայ գրականությունը և անհրաժեշտ է այնպես անել, որ աշակերտները սիրեն առարկան և փորձեն քայլեր անել ավելի խորքային իմացություն ապահովելու համար: Կարելի է ուսուցման նախնական փուլում շարունակել խաղային մեթոդներով բնագրի ուսուցումը: Շատ կարևոր է աշակերտին հասանելի դարձնել, թե ինչ նպատակով է ուսումնասիրվում տվյալ ստեղծագործությունը: Յոթերորդ դասարանի հայ գրականության դասընթացը սկսվում է նորագույն գրականության առաջին ներկայացուցչի՝ Եղիշե Չարենցի ուսումնասիրմամբ և սա իրականում ուսուցչի համար շատ լավ հնարավորություն է աշակերտներին գրականության հետ կապելու և նրանց մտածողության վրա դրական ազդեցություն ունենալու համար: Չարենցի կենսագրության կապը ստեղծագործության հետ անքակտելի կապի մեջ են և կարելի է հենց այդ կապի միջոցով հասանելի դարձնել ստեղծագործությունները:

Այլ է խնդիրը ավագ դպրոցում, որովհետև բացի արդեն միջին դպրոցում եղած վերլուծությանն փոխարինելու պիտի գա ստեղծագործական աշխատանքը, գրական-քննադատական հոդվածների մշակում, նախագծային աշխատանք: Ավագ դպրոցում այս առումով նպատակահարմար է կազմակերպել խմբային քննարկումներ և, իհարկե, բանավեճեր:

Բանավեճի մեթոդը հնարավորություն է տալիս ինչպես ներկայացնել թեմայի ներսում եղած խաչվող հասկացությունները, ներկայացնել տարբեր տեսակետներ, ինչպես նաև սովորեցնել աշակերտներին հարգել միմյանց կարծիքը, լսել և կատարել հետևություններ: Կան բազմաթիվ մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս զանգացնել աշակերտների քննադատական մտածողությունը և ձևավորել նրանց մեջ զարգացող, մտածող և վերլուծող անհատ, որը չի բավարարվի միայն յուժե պատմելով, այլ կգնա ավելի խորքային ուսումնասիրման, կպրպտի ու կգտնի լուծումներ տարբեր իրավիճակներից:

[11] Նույն տեղում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, պրակտիկ գործունեության տարբեր ձևերի և միջոցների ստեղծագործական համադրումը և կիրառումը արդյունավետ է դառնում սովորողների քննադատական մտածողության շնորհիվ:

Կատարած տեսական հետազոտության արդյունքների վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն ընձեռնեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների վերանայում, դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնում ու կիրառում և այլն: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, որն այսօր դիտարկվում է որպես հասարակական պահանջ և կրթության արդի խնդիր:

2. Տեսական վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է, որ քննադատական մտածողությունը, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիան ներառում է մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների՝ մասնավորապես պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման և խաղային ուսուցման տեխնոլոգիաների որոշակի տարրեր, խթանում է դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացումը և ուսումնական ակտիվությունը:

3. Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից դպրոցի ուսուցման գործընթացում որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, որը նպաստում է սովորողների ակտիվությանը, ճանաչողական կարողությունների արդյունավետ զարգացմանը:

4. Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կիրառվել «Հայ գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում և նպաստել դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մանկավարժական հետևյալ պայմանների դեպքում.

- բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
- ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն,
- ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
- ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
- դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում
- ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն:

5. «Հայ գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդների ընտրությունն անմիջականորեն կապված է ուսուցանվող նյութի բովանդակության, բարդության և ծավալի հետ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի շատ մեթոդներ ճկուն են և հեշտությամբ հարմարեցվում ու համապատասխանեցվում են դպրոցականների հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին: Փորձարարական աշխատանքների արդյունքները փաստում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան նպաստում է ոչ միայն սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև « Հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, N1, 2019, Երևան, 2019թ., էջ 153:
2. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.
3. Тягло А. В., Критическое мышление: проблема мирового образования XXI века // “Постметодика”, 2001, № 3 (35), с. 160.
4. Федотовская Е. И., Развитие критического мышления как задача высшей школы //Актуальные вопросы практики преподавания иностранных языков. Москва: “Академия”, 2003, 300 с.
5. Халперн Д.Ф. Психология критического мышления. Санкт-Петербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с.
6. https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf